

ՄԵԼԿ

Ցարական գինը 10 րուբլ, կէս տարվանը 6 րուբլ:
Առանձին համարները 7 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ:

Մեր հասցէն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տոն օրերէն):

Յայտարարութիւնը ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
Խաղաղականութեան 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մի լրագրի խմբագրութեան փորձը Անգլիայում.
—Ներքին ՏԵՍՈՒԹԻՒՆ. Կուսակցութիւն թէ
թայֆայ. Հողային ճգնաժամը Սուրբաւում. Նա-
մակ Անգլիայից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ
ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մի քանի խօսք Սերբիայի մասին.
Արտաքին լուրեր.—ՀԵՌԱՎԻԴԱՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱ-
ՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Միջազգային:

ՄԻ ԼՐԱԳՐԻ ԽԱՐԱԿԵԼՈՒ ՓՈՐՁԸ ԱՆԳԼԻԱ- ՅՈՒՄ

Այս օրերս Սալթրիի միջնատուրութիւնը
փորձ փորձեց խմբագրել մի լրագիր, որը
հրատարակվում է Անգլիայում, բայց այդ
փորձը նրան չափովեց, որովհետեւ մամուլ-
ընդհանրութեան վերաբերեալ անգլիական
օրէնքների վրա հիմնվելով, Սալթրիի գոր-
ծողութիւնների դէմ բողոքեցին թէ հա-
մայնքների ու լրագրի ժողովները և թէ
գրեթէ ամբողջ անգլիական մամուլը:

Լրագիրը, որի մասին խօսում ենք, ինչ-
պէս երևաց պարզամտական վիճաբանու-
թիւններից, հրատարակվում է Լոնդոնում,
Ֆրանսերէն և հայերէն լեզուներով, և
կրում է «Le Halastan» անունը: Լոնդոնի
օսմանեան դեպքում գանգաւակ էր այդ
լրագրի դէմ մարկիզ Սալթրիին, իսկ այս
վերջինը հրաման էր տուել ներքին գոր-
ծերի միջնատուրութեան գաղտնի դատաստա-
նական պաշտօնայն ուղարկել յիշեալ լրա-
գրի խմբագրատուն, այստեղ խուզարկու-
թիւն անելու համար:

Այդ դէպքը անմիջապէս ահազին աղ-
մուկ բարձրացրեց Լոնդոնի քաղաքական
շրջաններում և մամուլը մէջ: Համայնքնե-
րի ժողովում լորդ Զեմս Բրայս, իսկ Լոր-
դերի ժողովում լորդ Գրեյվիլ կառավարու-
թեանը հարցապնդումներ արեցին Անգլիա-
յում երբեք չեղած այդ անօրինակ խու-
զարկութեան մասին: Անգլիայում մամու-
լը այնպիսի կատարեալ ազատութիւն է
վայելում, որ Սալթրիի արածը կարող է
համարվել անգլիական աւանդութիւնների
և ազատ օրէնքների դէմ մի կատարեալ
յանցանք: Մարկիզ Սալթրիի պատասխանեց
որ ամենեւին դատարանութիւն չունէր խա-
փանել տալ յիշեալ Ֆրանսերէն-հայերէն
լրագիրը, այլ միայն ցանկանում էր տեղե-

կանալ արդեօք Լոնդոնում թէ փարիզում է
հրատարակվում այն լրագիրը, որի անունն
անգամ ինքը չէր գիտէր և հայերէն ար-
տասանութեան դժուարութեան պատճա-
ռով չէր էլ կարող արտասանել:

Անգլիական մամուլի հետեւալ օրգան-
ները «Daily News», «Manchester Guar-
dian», «Pall Mall Gazette», «Star», «Globe»
և ուրիշներ երկար յօդուածներ նուիրեցին
այդ հարցին, խստութեամբ յարձակվելով
Սալթրիի դէմ:

Թէ Զեմս Բրայս պարզամտում և թէ
վերջինեալ լրագիրները այն միտքն են
յայտնում, որ Անգլիայում երբեք պատա-
հած բան չէ որ օտար պետութեան մի
դեսպանին հաճոյանալու համար, անգլիա-
կան միջնատուրութիւնը, անգլիական ազգի
իրաւունքների և ազատութիւնների պա-
հապանք յանդգնէր խախտել այդ իրա-
ւունքներն ու ազատութիւնը, ջանալով
խափանել մի լրագրի, կամ նոյն իսկ խու-
զարկել տար մի խմբագրութիւն, անգլիա-
կան ազատ հոգի վրա:

Իսկ «Pall Mall» լրագիրը աւելացնում է,
որ մարկիզ Սալթրիի պէտք է յիշէ որ երբ
որ հանգուցեալ Պալմէրստոն միջնատու-
րութեանը անգլիական հոգից Ֆրան-
սիայի մի քանի գաղթականներին, այդ
վարձուքի հետեւանքն այն էր որ Պալմէրս-
տոն, անգլիական հասարակաց կարծիքի
բուռն բողոքին չը դիմանալով ստիպվեց
անմիջապէս հրաժարվել առաջին միջնա-
տուրի պաշտօնից, իսկ հայերը և նրանց
մամուլը, աւելացնում է յիշեալ լրագիրը,
տաան անգամ աւելի արժանի են անգլի-
ական ազգի համակրութեան, քան թէ
հապաղէին III-ի կառավարութեան ժամա-
նակ Ֆրանսիայից փախած և Անգլիայում
ապաստան գտած մի քանի գաղթականներ:

Մարկիզ Սալթրի իր արած քայլի ամ-
բողջ պատասխանատուութիւնը զգնելով ներ-
քին գործերի միջնատուր վրա, Համայնքների
ժողովի անգամ լորդ Բրայս այդ ժողովի
նիստի վերջում աւելացրեց, որ զեմս և կը
վերադառնայ այդ հարցին և միջնատու-
րութեան վարձուքին, ժողովի մէջ պետական
ընդհանուր բերդժէտի քննութեան ժամա-
նակ:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆ ԹԷ «ԲԱՅԱՆ»

Ամեն տեղ, որտեղ կայ սկզբունքի և դադար-
ի խնդիր, լինի դա մամուլ թէ դպրոց, մի չըն-
չին ընկերութիւն, թէ մի նշանաւոր պարու-
մենտ, այնտեղ միշտ լինում են և կան զանա-
զան կուսակցութիւններ: Փանի որ կայ դադա-
րի և սկզբունքների տարբերութիւն, քանի
որ տեղական, վարչական, քաղաքական, դպրո-
ցական կամ հասարակական այս կամ այն խըն-
դիրներում տիրում է մտքերի և ուղղութիւնների
զանազանութիւն, միանգամայն անխուսափելի է
դառնում որոշ գաղափարներով ղեկավարվող
կուսակցութիւնների գոյութիւնը:

Վերին աստիճանի անգոյն և տեղտե պէտք է
լինել կարծելու համար, թէ կուսակցութիւնները,
լինեն դրանք քաղաքական թէ մի ուրիշ բնա-
ւորութեան կուսակցութիւններ, արհեստական
կերպով սարքած բաներ են, raison d'être չու-
նեն, և ուրեմն նրանց գոյութիւնը ոչ համարելի
է և ոչ ցանկալի:

Ընդհակառակը: Փանի որ, կրկնում ենք, կայ
գաղափարների և սկզբունքների տարբերութիւն,
քանի որ ժողովրդի մտաւոր կեանքի մէջ գործն
գեր կատարող մարդիկ միմեանց հակասող կար-
ծիքներ և հակացողութիւններ ունեն կրթու-
թեան, անտեսական հարցերի, վարչական խըն-
դիրների, իրաւունքների և պարտաւորութիւնների
մասին, կուսակցութիւնները գոյութիւնը ոչ թէ
միայն ունի իր խորհուրդը, այլ և նա նշան է,
որ այս կամ այն գործի մէջ մասնակցող մարդիկ
ոչ թէ միայն քնած և թմրած չեն, այլ և անկեղ-
ծաբար ղեկավարվում են որոշ հայեացքներով, և
համոզմունքներով:

Այդ պատճառով ազատ միտ, ազատ ա-
կան և պահպանողական բառերը դա-
տարկ բառեր չեն, ինչպէս կարծում են մեր
միջոցաւորակաբանները: Եւ բարձրագոյն-ազ-
գայինները, այլ մի որոշ գոյնի ուղղութիւն և մի
ամբողջ շնչով են ներկայացնում, և որոնք շատ
հարցերում նոյնքան տարբերվում են միմեանցից,
որքան սպիտակ գոյնը դեղին գոյնից, որքան
աշնան եղանակը գարնան եղանակից:

Այդ տեսակ տարբեր ուղղութիւն ունեցող

կուսակցութիւնները ոչ թէ միայն կարող են
գոյութիւն ունենալ հայ հասարակութեան մէջ,
այլ և նրանք անպատճառ պէտք է գոյութիւն
ունենան, և բոլորովին հակակրեւի չէ, եթէ այդ
տեսակ տարբեր ուղղութիւնների վրա հիմնված
կուսակցութիւնները միմեանց դէմ նոյն իսկ ա-
մենակատարի և ամենատաք կռիւ մղեն:

Ուրիշ բան է այն հարցը, թէ որքան իսկապէս
փաստական և ապարդիւն է մեր ժողովրդի նման
անկրթ, տգիտութեան մէջ խորատուղլած և
բնականաբար յետադէմ ինտելիկաներով ներշնչ-
ված ժողովրդի մէջ պահպանողական կամ յետա-
դէմ կուսակցութեան գոյութիւնը կամ գործու-
նէութիւնը, քանի որ ժողովրդի կեանքը անընդ-
հատ վերանորոգութեան և նոր հոսանքների է
կարօտ: Սակայն այս անգամ կուսակցութիւննե-
րի օգտակար և փաստական ուղղութիւնների մա-
սին չէ մեր խօսքը, և մասնաւորեալ մեր խօսքը
հայոց հասարակական կեանքի վրա, մենք այս
անգամ ուղղում ենք միայն մատնանիլ անել մի
տխուր երեւոյթի վրա, որը այնքան զօրեղ կեր-
պով աչքի է ընկնում մեր բոլոր գործերի մէջ:

Այդ տխուր երեւոյթը, և անպայման տխուր
երեւոյթ, այն է, որ մեր մէջ գոյութիւն չունեն
գաղափարի և սկզբունքի վրա հիմնված կուսակ-
ցութիւններ, որոնց անդամներին միմեանց հետ
կապողը համոզմունքներ և մտքերի համընթա-
խութիւն լինէր, այլ դրանց փոխարէն կան անձ-
նական համակրութեան կամ հակակրթութեան
վրա հիմնված խմբեր, որոնց միմեանց անգամ ծի-
ծաղելի է կուսակցութիւն անունը տալ, ո-
րոնց շատ-շատ կարելի է թուրքերէն բառով
թափափա անունը տալ:

Մենք չունենք կուսակցութիւններ, այլ մենք
ունենք թափափանք:

Հէնց այս րոպէիս Թիֆլիսում, կամ ինչպէս
օպտիմիստները սովոր են ասել, հայոց մը-
տաւոր կենտրոնում, գոյութիւն ունեն մի երկու
այդ տեսակ թափափանք, որոնց բազմաբան
անդամներ միմեանց հետ կապողը, ոչ թէ գա-
ղափարներ կամ սկզբունքներ են, այլ մի քանի
անձնաւորութիւններ, որոնց գլխաւոր յատկու-
թիւնը անգոյնութիւնը, անպիտանութիւնը և հա-
սարակական անբարեխղճութիւնն է:

Գաղափարների համընթախութիւն այդ թափա-
փանքի մէջ չը կայ, որովհետեւ իսկապէս գաղափար
էլ չը կայ և մտքերի համընթախութեան վրիշա-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԻՐԶԱ—ԹԵԻՈՍ

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԿԵՆՏՐՈՆ

(Յիշողութիւններ)

Այստեղ կարծես ուղում էր ասել. «ինձ մի
ցանկանալ, բայց մի դառն հառաչանք նրան
ընդհատելով» «Մեղայ, Տէր, մեղայ» ասաց, խմեց
և ալ ձեռքը կրծքին դնելով, գլուխ տուեց և
լռեց: Բայց փոքր լուրիւնից յետոյ՝ կրկին թե-
քը կրծքին դնելով և քիչ բարձրանալով.

—Երաւարութիւն, ասաց խնամարութեամբ, Աս-
տուած օջախը հաստատ պահի, աղա, խնդրեմ
ինձ մուրախտ անէք (արձակէք)...

—Տեսնում եք, ինձ էլ աղա էք համարում,
ուրեմն ինձ էլ որ. պատահէ ճանապարհին,
հրաժարվե՛ք պիտի ասէք և խոյո տաք:

—Քաւ լիցի, անարժան ծառան արժանաւո-
բաց յարգը գիտէ...

—Ո՛վ գիտէ, կարելի է ինձ էլ անարժան հա-
մարէք:

Երկուքը տատանումից յետոյ կրկին նստելով և
գէշմայի ծայրերը միմեանց մտեցնելով՝

—Ո՛յ, ո՛չ զուրբան, խալալա՛վ էք տալիս ինձ...
դուք բարեկէլս ինչպէս կարելի է...

—Ի՞նչը ինչպէս կարելի է:

—Ինչպէս կարելի է, որ նուազատ անց չը բա-
րեի, Աստուած ինձ մահ տայ:

—Ուրեմն դուք խոյո էք տալիս նրանցից, ո-
րոնք անց չեն բարեկէլս:

—Գիտես, զորբան, էլ ինչ ասեմ... Դա-
տեն Տէր գայնոսիկ... Է՛հ, փուշ աշխարհ...

—Իրաւունք ունիս, ասացի այդ գաղտնիքը ի-
մանալուց գոհ, աւելի լաւ չէ, որ դու էլ նրանց
մտքից անցնես և չը բարեկէլս:

—Լաւ ես հրամայում, բայց... երես չի կըտ-
րում. մէկ էլ թաւրիկ էդ դժուար է:

Երեսի քրտնեքը սրբելով և ապա դժուարու-
թեամբ՝

—Ղուրբան, ասաց, իմ քրտնեք է ծովը
ընկել... Մեղայ Աստուծոյ... հալալ իմ մեղքս
է... օրհնեալ են կամք Տեսնա՛ն, Է՛հ, վարժապե-
տութիւնը դժուար, շատ դժուար բան է, ղուր-
բան...

—Ի հարկէ, մանաւանդ Պարսկաստանում,
բայց աւելի մենք ուսուցիչներս ենք մեղաւոր:
Ասած է. «Ժառայեք հնազանդ լեռուք», չի ասված
«ստրուկ լեռուք»: Բացի այդ, մաքուր, աղին
մաքը պիտի լինի ուսուցիչը և աղին էլ ընկեր
պիտի ունենայ:

—Շատ ճշմարիտ է. լաւ ես հասկացել, օրհնի
ծնունդը, շատ ճշմարիտ է, ինչ անես սխալմունք
է... Օր աւուր բղիճ դրան... Եղպէս չէինք սո-
վորել... ճշմարիտ է, մենք ենք մեղաւոր... մենք

չը կարողացանք... ստրուկ ենք եղել ստրուկի
պէս... Օր աւուր բղիճ դրան... ճշմարիտ է, մենք
ենք մեղաւոր... Քաւեալ զանօրինութիւնս իմ...
հայ հայ թաւրիկ, թաւրիկ... Տէր, մի համարէք
զայս զմեզ...

Կամեցայ նրա ուսուցչական կեանքից մի քա-
նի տեղեկութիւններ ևս ստանալ, բայց այդ մի-
ջոյնը դանդաղ ձայնը երկուսիս յիշեցնեց զեղ-
րոցական պարտաւորութիւնը: Միջադեպից իս-
կոյն ոտքի կանգնելով, ձեռքերը կուրծքի վրա
խնամարթնեալ՝

—Աստուած հաստատ պահի, ասաց, զամբի-
տուր, ձեզ գործից քցեցի, հրամայեցէք, ես մու-
րախտ լինեմ...

—Շատ չնորհակալ կը լինեմ, եթէ յաճախ չնոր-
բեքէք ինձ օտո, կը ցանկանայի ձեր անցեալից
ինձ պատմելը, ասեցի ձեռքս նրան մեկնելով:

—Ղուրբան, բայց ես ամօթով մնացի, կը
բաշխէք, ասաց, անվտանգ ձեռքը ինձ մեկնելով:
առանց մի որոշ բան ասելու՝ գալու կամ չը գա-
լու մասին:

Այնուհետեւ ես այլ ևս Միջադեպի տեսնե-
լու բաղդ չունեցայ:

IV

Տառապեալ ձեռն իր թշուառութեան մէջ գոնէ
մի միջնատուր հրեշտակ ունէր, որ ամբողջ
թիվածացնում էր նրա ծանր վիճակը: Այդ միջ-
նատուր ժամկէտի 16 տարեկան չիկաներ Շու-
շանն էր:

Ձեռն քաղցած է, ծարաւ է կամ մի այլ պէտք
ունի, բարձր և սուր ձայնով գոռում է «Շու-
շան», իսկոյն առաքինի այդ Շուշանը՝ ցերեկ լի-
նի, թէ գիշեր, տաք լինի, թէ ցուրտ՝ շտապով
օգնութեան է հասնում, ջուր է բերում, հաց է
գտնում և ժպտալով գոհ հեռանում:

Բայց մեր Միջադեպից ոչ թէ զուրկ էր այդ
Շուշանից, այլ և այնքան ամալկոտ էր, որ հի-
ւանդացած ժամանակ այդ մասին երկը օր
եկեղեցում չէր ելալուց յետոյ կրկնապէս:

Նոյն իսկ Միջադեպի հարեանը շատ ան-
գամ պատահելով քահանայի ուղարկած ժամկո-
չին, չէր կարող որոշ պատասխան տալ և երբեմն
էլ ինքը դեռ այդ հարցնողից կրկնապէս նրա հի-
ւանդութիւնը: Քահանայից զատ հազիւ թէ զըռն-
վէր մէկը, որ հետաքրքրվէր Միջադեպի հի-
ւանդութեամբ:

Պէտքական էլ անպէտք դարձնող այդ քաղա-
քում, ում պէտք էր նա: Ասենք աղաների աշա-
կիրս եղած ժամանակը նա հարկաւոր է եկել,
բայց այսօր նրա տիրացութիւնը Միջադեպի գործ
էլ կարող է անել, ուրեմն «ալլաւմարա» (թէ-
կուզ) երեք օր քաղցած մնայ՝ մեռնի, ում ինչ
հոգա:

Եւ Միջադեպից, որ մի օր նրան այդպէս
հիւանդ, մոռացված վիճակում պատահմամբ տե-
սել էր, կամենալով նրա այդ խնդութեան վրա
ուշադրութիւն հրաւերել՝ հետեւեալ արդիւնքն ու-
նեցաւ:

բէն դրանց մէջ տիրում է անձնական համակրութեան կամ հակակրութեան սկզբունքը: Եւ ուրիշ կերպ չէր էլ կարելի բացատրել այն խայտառակ երևոյթները, որոնց ամեն օր ամենքս էլ տեսնուեալ ենք:

Ահա փաստերը:
Որտեղ կարելի է տեսնել, որ մի քանի ամիս առաջ այս կամ այն լրագրին խնկարկուն և երկնք բարձրացնողը, անցնելով հակառակ լրագրի կողմը, սկսէր հայտարարել թափել իր առաջվայ պաշտածի վրա,—եթէ ոչ հայոց մամուլի մէջ:

Որտեղ կարելի է տեսնել, որ մի քանի օր առաջ հրապարակուի այս կամ այն գործողին վնասակար և աչքակապ համարող մի քանի օրից յետոյ նրա հետ բարեկամանալով, երկնք բարձրացնէր նրա անունը և գործերը,—եթէ ոչ հայոց զրականութեան մէջ:

Որտեղ կարելի է տեսնել, որ երկվայ գաղափարակցները, ուղղութեան և համեմատութեան անունով երդնողները, այսօր հակառակ խմբերի մէջ մտնելով միմեանց հալածէին,—եթէ ոչ հայոց ինտելիգենցիայի մէջ:

Որտեղ կարելի է կարգաւ այսպիսի տողեր, «մենք ունենք որոշ ուղղութիւն և ծառայում ենք ազգին և եկեղեցուն, և այդ պատճառով հարկաւոր եղած ժամանակ ազատամիտ ենք,—հարկաւոր ժամանակ յետադէմ, հարկաւոր ժամանակը արմատական, հարկաւոր ժամանակը պահպանողական,—եթէ ոչ հայոց լրագրի մէջ....

Որտեղ կարելի է տեսնել մարդիկ, որոնք հոգաբարձական ընտրութիւններում, մի օր և է ընկերութեան ընդհանուր ժողովում, վերջապէս մի երեքփոխ, կամ տեսուչ ընտրելիս՝ ղեկավարվելին միմիայն անձնական դիտումներով, կրքից դուրս լինելով և թայֆայական զգացումներով և ընտրելին այնպիսի մարդկանց, որոնց նոյն իսկ ընկերութեան ժողով կամ զարդոց ներս չէ կարելի թողնել,—եթէ ոչ մեր հայկական ասպարէզներում.... և այլն և այլն....

Ամեն տեղ նոյն երևոյթը.—մտքը դարձ, գնացէ՛ք եկեղեցական մի ժողով, նայեցէ՛ք մամուլի մէջ տեղի ունեցող երևոյթներին, գնացէ՛ք մի ընկերութեան ընդհանուր ժողով, հետաքրքրվեցէ՛ք զանազան ընտրութիւններով, և դուք շատ շուտով կը համոզվէք, որ որչա սկզբունքներով և որչա գաղափարներով ղեկավարվող կուսակցութիւններին փոխարէն, «կուսակցութեան» անուան տակ, ամեն բանի մէջ խառնվողները միմիայն կըրքով և անձնական տեսակէտներով ղեկավարվող թափաշան եր են և ուրիշ ոչինչ....

Խ. Մ.

ՀՈՂԱՅԻՆ ԶԳՆԱԺԱՍԸ ՍՈՒՐՄԱԼԻՈՒՄ

Արհա՛յ թըքական գիւղը Մեծ-Մասիսի արևմտեան կողմը, մի փոքր բլրի ստորոտի վրա է շինված. սա ընկնում է Հին-Բայազետ տանող ճանապարհի վրա և իզդրից 6 վերստ հեռաւորութիւն ունի:

Հարսանեաց հրաւը էր:
Հանդիսականներին մէկը դառնալով դէպի աւազ քահանան հարցրեց.

—Տէրաբէ, ո՞ր է միւս տիրացուդ:
—Տէրաբէ, խեղճը, պատասխանեց քահանան:
—Հէր ա քէֆադդացէ ողորմելին, ի՞նչ ընկու (պարկելու) վախտ ա, ասեց երեքփոխը:

—Ժամկոչը, սղա, կասէր, որ բնիւ (չատ վատ) տկար է, պատասխանեց կրկին քահանան:

—Միրզա-Ֆեհրը շատ խեղճութեան մէջ է այժմ, ասաց Միրզա-Պօղոսը, սղաներ, նրան մի օգնութիւն պէտք է արած:

—Միրզա, իմ ու թու դարը քաշիր, նա մինջան ա, ոնց որ լինի՝ իր չոր գլուխը կը պահի, բայց մեր բանն ա դժուար, դու մեր բանը խօսիր, մէջ մտնելով նկատեց հոգաբարձու աղա-Վասիկը:

—Զէ, սղա, պատասխանեց նրան Միրզան, անցեալ օրը պատահմամբ մտայ նրա մօտ: Դատարկ սենեակում, նստած գետնին, խեղճը եօղանը (վերմակը) քաշել էր զլիսին և տնքում, Աստուծու տունած մի փալաս էլ չը կար տակին: Տակինը մի հին խսիր էր:

—Ճուտ հրէս քանի տարի ա էն խարաբում, նստած, ցուրտ, հողի, զիբիլի մաջ ապրում ա, մէջ աստուծոյ հինչ ա, ասումս թա Միրզա-Ֆեհրը մեռնի, աղա-Վասիկին հանդանալու համար ասաց թաւրիգաբնակ զարադաղցի Տիւրան աղայի հայրը:

Բլուրի գագաթին երևում են հին ամրոցների հետքեր. կան մի քանի այրեր, ուր միայնակաց մարդիկ ճգնելիս են եղել, և մի ուխտատեղի Ս. Գէորգ անունով: Այս բոլորը ենթադրել են տալիս, որ մի ժամանակ սա եղել է հայաբնակ գիւղ իսկ այժմ և ոչ մի տուն հայ չը կայ: Հընայնայդ հայր Սեբաստեան ենթադրում է, որ սա պէտք է լինի Մովսէս խորենացու յիշած փառախոտը. մեզ թվում է թէ սրբազանը իր կարծիքը հիմնում է խորենացու հետեւեալ խօսքերով վրա,— «Վաստիա... յետ ծնունդից զսոսա (գլխաւոր, ըզ-փառուս և գլխաւոր) անցանէ զգետնը մերձ ի Լեւանէն հարաւայ (Արարատ) և շինէ անդ առ խորշիկը լեւանոսին մեծապէս ծախիւք երկուստեան. զմինն յարեւելս կոչս մօտ յակունս աղբերացն՝ որ առ ստորոտով ելանեն. իսկ զմիւսն յարեւմուտս կոչս նորին տանն, բացագոյն իբր մեծ օր հասարակօրեայ միոյ հետեւեալագոյն առնն ճանապարհին Ետ զնոսա ի ժառանգութիւն երկուց որդեաց իւրոց, արեւոյ փառօրի և կայտառին Յուակայ. յորս բնակեալ, յիւրեանց անուն զտեղիսն կոչեցին, ի փառօրայ՝ փառախոտ և ի Յուակայ՝ Յուակայն: Բայց զԼեւանէն Վաստիայ անունէն իւր անուամբ Մասիս» (Մ. խորենացի գիրք Ա. դ. ԺԲ. եր. 41): Թէ որքան ճշմարիտ է Արհա՛յի հին փառախոտ լինելը, ամենաուշագիւր հետախուզողները միայն կը պարզի:

Յօդուածին նպատակից դուրս լինելով հետախուզողներին վրա խօսելը, այսքան տեղեկութիւնն էլ բաւական ենք համարում:

Արհա՛յում ապրում է մօտ 150 տուն թուրք, որոնք ամենաաղքատ զրուկներն են: Սրա պատճառը հողի պակասութիւնն ու անպտղաբերութիւնն է: Գարնանը Արհա՛յի արտերով անհնար է անցնել. ցելը մինչև մարդու ծնկներն է հասնում, որը հետզհետէ մօտենալով գիւղին փոխվում է ճահճի ու հալալին տեղ է բռնում: Սա ամառ ձմեռ մնում է առանց ցամաքելու և սարսափելի զարչահոտութիւն է տարածում իր չորս կողմը: Ճահճից բռնում է մօտ 400 ղեւանտին տեղ, որին տեղացիները «Արա-Վեօլ» (Աւ լիճ) անունն են տալիս: Արա-Վեօլը զոյալով է սարերից թափվող հեղեղաւաններից, որոնք ելք չը գտնելով անցնելու, մնացել են Արհա՛յի և իզդրի-Մասիսի հողերի վրա: Ստորագոյն զաշտային մասը սկսեալով լինելով՝ ընդունակ է խոնավութիւն ծծելու և մի զարմացէք, որ 5—6 վերստ ճահճից հեռու իզդրի-Մասիս և Բահաբուր գիւղերը ենթարկված են նրա ազդեցութեանը, մինչև անդամ իզդրի խոնավութիւնն էլ նոյն ճահճին են վերաբերում: Եթէ գիւղերն այնքան խոնաւ են, որ մի երկու արշին խորութիւնից ջուր է դուրս գալիս, հեշտ է ենթադրել, թէ ճահճին մօտիկ արտերն ինչ վիճակի մէջ կը լինեն:

Եւ իսկապէս, հարկաւոր դեպքերում հողեր անմշակ են մնացել: Այդ անմշակ հողերի մեծագոյն մասը արհա՛յիներինն է: Սրանք, չը նայելով իրանց թշուառ ապրուստին, դարձեալ պարտքի մէջ խեղճված են: Խեղճներ երկար տարիներ նիւթապէս տանջվելուց յետոյ վերջապէս խնդրաւորութիւններով միմիայն զարմանալի է, աւելացրեց քահանան, թէ ինչպէս է դիմանում նա զաղաւի դարչահոտութեան և այն անտանելի ասպականութեան մէջ: Ելի հազար փառք Միրզա-Ֆեհրին, բայց Միրզա-Ֆեհրին էլ, աղս, օգնութիւն պէտք է....

—Լաւ թէ վաս՝ մարդը երկար տարի ծառայել է և այսօր էլ ծառայում է եկեղեցուն, պէտք է վերջապէս մի կերպ խնամք տարած:

—Միրզա-Պօղոս, շատ է մի վախճանը, Միրզա-Ֆեհրին ջանք իմ ու թու ջանքից պինդ ա, չի մտնել, անհող կաց, նկատեց կրկին աղա-Վասիկը:

—Ա եօս ս, նրա ջանը որ կայ, չլիք ինչիդի երկար ա, թօքա թա և էլ նրա ջանն ունենամ, պաշտպանեց աղային միւս հոգաբարձուն:

—Այնի, խեղճ ա, թող չը մտնել, նոր ա հալա սկսել մի օտուրաչուն (սպաւաւոր) դաս տալը, ասեց ժպտալով աղա-Տիւրանը *):

—Աղա-Տիւրան, ամիսը ի՞նչ ևս տալիս է դրացուդին, հարցրեց երեքփոխը՝ նոյնպէս ժպտալով:

—Ամիսը, ուստա Արղուսան, տալիս եմ նրան զրան ու կէս (50 կօպ)՝ իրիկուն առաւօտ էլ մի մի ստաքան չալով փունջ: Մին թամաշա ես, մյշի, գետնան կարդում ա, ինքը չաղաթին գետնանը ննջում:

—Միւս օր Միրզա-Ֆեհրին բռնեցի, կասեմ եկ սրան մին թափ տալիս Սրան շատ ետաւ-բօղալ արեցի (ստիպեցի) թա դրուստն առա, Միրզա-Ֆեհր, որքան փող ես չինել: Սա հա օհան, հա բու հան (այս և այն կողմ ընկաւ) բաց չը թողնեցի, կասեմ, դու մեռնես Միրզա-Ֆեհր, նրան չալած (ի դուր մի չարալով), քեզ բաց թողնողը չեմ, ախր-մախր չեմ հասկանալ, պէտք ա տես. որքան փող ունես, ամաւ ասա՝ սկի բան:

—Միւս օր Միրզա-Ֆեհրին բռնեցի, կասեմ եկ սրան մին թափ տալիս Սրան շատ ետաւ-բօղալ արեցի (ստիպեցի) թա դրուստն առա, Միրզա-Ֆեհր, որքան փող ես չինել: Սա հա օհան, հա բու հան (այս և այն կողմ ընկաւ) բաց չը թողնեցի, կասեմ, դու մեռնես Միրզա-Ֆեհր, նրան չալած (ի դուր մի չարալով), քեզ բաց թողնողը չեմ, ախր-մախր չեմ հասկանալ, պէտք ա տես. որքան փող ունես, ամաւ ասա՝ սկի բան:

—Միւս օր Միրզա-Ֆեհրին բռնեցի, կասեմ եկ սրան մին թափ տալիս Սրան շատ ետաւ-բօղալ արեցի (ստիպեցի) թա դրուստն առա, Միրզա-Ֆեհր, որքան փող ես չինել: Սա հա օհան, հա բու հան (այս և այն կողմ ընկաւ) բաց չը թողնեցի, կասեմ, դու մեռնես Միրզա-Ֆեհր, նրան չալած (ի դուր մի չարալով), քեզ բաց թողնողը չեմ, ախր-մախր չեմ հասկանալ, պէտք ա տես. որքան փող ունես, ամաւ ասա՝ սկի բան:

*) «Մշակի» № 42-ի մէջ սխալմամբ տպւած է «Աղա-Տիւրան», փոխանակ «Աղա-Տիւրան»:

րում են կառավարութեան, որ հնարք գտնի իրանց զրուկները բարձրելու: Կառավարութիւնն առաջարկում է իզդրի բաժնի մէլիքութեան գիւղացիներին, օգնել արհա՛յիներին ճահճից առաւ հանել գէպի Արաբը, որ ճահճը չորանալով կարելի լինի ցանել:

Առաջարկն ընդունվեց. մի քանի օր շարունակ բանտները փորում էին առուն, որը ապրիլի 1-ին պատրաստ էր: Եղան մարդիկ, որ ասեցին թէ առուն բարձր է քան թէ ճահճի յատակը, ուրեմն ջուրը այս առունով չի հոսի: Մեղ աջողեց դեռ ջուրը բաց չը թողած ժամանակ տեսնել առուն, նա բաւական խոր ու լայն է: Ապրիլի 4-ին տեղական ծառայողներից շատեհեան առած ուսելու պաշար՝ գնում են ճահճի ջուրը հանդիսաւոր կերպով բաց թողնելու: Արհա՛յիցները ուրախութեամբ չափ չը կար, նրանք յոյս ունէին միանգամայն ձեռք բերել մի քանի հարկւր խալվարի ամենաբարձրերը հող:

Առուն բերանը բացանելուն պէս ջուրը գոռում գոռում մտնում է նրա մէջ ու արագ հոսում է: Հանդիսականները նստում են ճաշի, կենացներ են դատարկում, ճառեր են խօսում... Ճաշից յետոյ ուղում են իմանալ թէ ջուրն ուր է հասել և տեսնում են, որ գոռում գոռում հանող ջուրը շատ դանդաղ է գնում: Գարձեալ մի քանիսը ենթադրում են, որ ջուրը կը քաշվի դէպի Արաբը, իսկ ոմանք՝ թէ այդ առունով կերթան միմիայն իզդրի, իզդրի—Մասիս, խանաղովի առունների ջրերը, որոնք այժմ դէպի լիճն են բաց թողած: Խալ այժմ 10 օրվայ փորձը ցոյց է տալիս, որ լիճ մէջ թափված ջրի կէսն էլ հաղի է հոսում առունից, հետեւաբար, թէ կէսն էլ հաղի է հոսում առունից, որից հետոյ ուրիշ օգուտ տուած չի լինի հասարակութեան: Այժմ ասում են որ պ. գաւառապետը մտադիր է առուն աւելի խորացնել տալ: Թէ այս մտադրութիւնը որքան կը նպաստի ճահճի չորանալուն, այդ ցոյց կը տալ ապագան:

Որովհետև խօսքը Արա-Վեօլը չորացնելու մասին է, աւելորդ չենք համարի մի մոռացված դէպք յիշել:

Պ. խանաղով (Վաղարշապատի ներկայ գաւառապետը) երբ կառավարում էր Սուրմալիի գաւառն էլ, տեսնելով իզդրի—Մասիսիներին ու արհա՛յիներին թշուառ զրուկները, առաջարկեց մի առաւ հանել Արաբից և սրան միանցնելով Արա-Վեօլն էլ չորացնեն, ու սեպական ջուր ունենան իրանց նոր ձեռք բերած վարելահողը ջրելու: Առաջարկութիւնն ընդունվում է, առուն փորում, ջուրն անցկացնում և ի պատիւ պ. գաւառապետի առուն անուանում են «խանաղովի առուն»: Դեռ ճահճը չը միացրած այդ առունը, յայտնում են կառավարութեան, որ Արա-Վեօլը չուտով կը չորանայ և ժողովուրդը նեղ զրուկներից ազատված կը լինի: Կառավարութիւնն ի վարձատրութիւն պ. խանաղովին թող է տալիս չորացած ճահճից 50 խալվարի տեղ (մօտ 150 դեռ.) իրան վերցնել: Բայց պ. խանաղով իր սահմանը

150 խալվարի է գծում ու ծառեր տնկում: Սկզբում գիւղացիք ոչինչ չեն հասկանում, բայց երբ իրանց ասում են թէ ծառերի մէջ եղած հողը խանաղովինն է և իր անուն առունից օգտվելու իրաւունքն էլ նրան է վերապահված, գիւղացիք հասկանում են բանն ինչուին է, սկսում է գանգատ, դատ, բայց ոչինչ չէ լինում, շնորհով տեղացի մի քանի մարդկանց: Այժմ պ. խանաղովի ամբողջ հողը ջրի մէջ է, այն ջրի, որը չորացնելու համար պէտք է վարձատրութիւն ստանայ:

Պ. խանաղով շատ լաւ է իմացել ու նախատեսել, որ մի օր Արաբից ջուր արհեստական ձևով կը ցամաքեցնեն և այդ հողը անգնահատելի կը լինի:

Մենք որքան կարողացանք տեղեկանալ, անցեալ տարի հողաշահները իմանալով վերս յիշած մանրամասնութիւնները, ասել էին, որ աւելորդ զրաւած հողերը պ. խանաղովի ձեռքից կը խլուվեն, եթէ ժողովուրդը նորից խնդրէ յարուցանի: Բայց... չենք հաւատում որ մի բան կարողանան անել, քանի որ գիւղացիք պատրաստ են իրար տուն քանդելու, այլ ոչ շինելու....

Գալով ճահճի չորանալու օգուտներին, մի բօպէ անգամ չը պէտք է կատարծել: Ճահճը չորանալով նախ՝ գիւղացիները կունենան աւելորդ մի քանի հարկւր խալվարի տեղ վարելահող, այն հողերը, որոնք ճահճի աղբեղութեամբ մնացել են անմշակ (տեղացիք այդպիսի շատ խոնաւ հողին «դնա» են ասում) ցամաքելով կը մշակվեն, երկրորդ՝ գիւղերի բնակարանները կաշտովին խոնաւութիւնից և վերջապէս այն միադնները, որոնք ամառը ճահճից դէպի առանց այն էլ կեղտոտ գիւղերն են տարածվում և զանազան տարափոխի հիւանդութեան պատճառ լինում, կը վերջանան: Ուրեմն ամեն հնար գործ պէտք դնել այդ ճահճը չորացնելու:

Բաղալ

ՆԱՄՄԱԿ ԱՅԱԼՑԻԱՅԻՑ

Ապրիլի 17-ին

Արդէն պաշտօնապէս յայտարարված է, որ, այս տարի սեպտեմբեր ամսում բացվելու է թիֆլիսում կովկասի ներքին արդիւնաբերութեան առաջին ցուցահանդէսը: Ախալցխայում չէ նկատվում ոչինչ պատրաստականութիւն, կարծելով թէ ցուցահանդիսի համար անապահովացիւ չունեն ուշադրութեան արժանի արդիւնաբերութիւն. իսկ մեծ մասը չեն ըմբռնում ցուցահանդիսի բուն նշանակութիւնը: Նրա օգուտները փողմերը, սառն անտարբերութեամբ սպասում են, որ իրանցից պահանջվի մի բան, որպիսին հարկաւոր է:

Ախալցխայի մի քանի արհեստների արտադրութիւնը վաղուց է որ զրաւել է հեռաւոր և մերձաւոր՝ մի քանի քաղաքների ուղադրութիւնը, որպիսիք ցուցահանդիսում կարող են բռնել իրանց պատշաճաւոր տեղերը. հետեւաբար ցուցահանդիսում ներկայացված նիւթերը, որոնք բոլորովին անծանօթ էին օտարերկրացիներին, նրանց ևս ծանօ-

ման ասում աւ խնկաւս և տեսայ որ բանը չաթին ա (դժուար է), կասեմ դէ ասա մին հարիւր թիման կենիք, սա յետ դառաւ ինձ թա. «Վասն բանիդ այդորիկ ոչ ունիմ տալ քեզ պատասխանի...»

Երրորդ անգամ ևս ծիծաղը յաջորդեց երկուստարկ պատմիչ աղային, խեղճելով Միրզա-Պօղոսի յարուցած հարցը:

Այդ միջոցին ներս մտան սաղանդարները
—Փարսը իմ մասին, վարժապետ, մի լաւ տեսնեցե՛ք....

—Ո՛չ, ոչ, «հիջալ, հիջալ» ասացին պարսկերէն այս և այն կողմից:

—Բայաւտա, ասեց զարալային և սկսեց «հիջալը»:

Ես մօտեցայ Միրզա-Պօղոսին:
—Միրզա-Պօղոս, խեղճ Միրզա-Ֆեհրի հարցը իր բաղդի պէս ծովն ընկաւ, ասեցին:

—Փարսը իմ մասին, վարժապետ, մի լաւ տեսնեցե՛ք, կասի:

«Հարքի բա բախտի ու քի բեարեբարդադ, Ասպի ու դեար թաւիւս խնար բեարդադ»:

«Ում բաղդը որ ծովեց մի անգամ, ախուռումն էլ ձին էլ կը դառնայ»:
Հիմի միւր Միրզա-Ֆեհրի բանն ա:

Թ. Խոջամիրեան

ԹԵԼԱՒԻՑ մեզ գրում են. «Այստեղի մի վրացի նորերումս թայն է անում իր կնոջ ուղիղ մեջ, որից ողորմելի չուտով մեռնում է: Ուստի կանոն-թիւնը արդէն արձանագրութիւն է կազմել եղեռնագործութեան մասին և մեռածի դիակը պէտք է անդամահատեն: Ասում են որ եղեռնագործութեան չարժանութիւնը ամուսինների ընտանեկան երկ-պառակութիւն է եղել»:

Գոմբորի խնուրու վրա անդադար դժբաղդու-թիւններ են պատահում: Ընթերցողը յիշում է, որ այդ ճանապարհին զո՞ գնաց երիտասարդ Ռուբեն Արմրանի, իսկ այժմ Թէլաւի մեր թղթա-կիցը գրում է մեզ որ այժմ օրերս նոյն ճանապար-հի վրա Գոմբորի բժիշկ Կ. Ա. կառքը շուռ գալով, բժիշկը կոտորում է իր ձեռքը: Դրանից առաջ էլ նոյն ճանապարհի վրա կոտորով անց-նելով թէլաւեցի պ. Ե. իր ոտն է կոտորում: Այդ դժբաղդ դէպքերը մեզ յայտնի են, բայց սոցիա-լիստական օրէնքներ են պատահում, որոնք մեզ անյայտ են մնում:

Կովկասեան գիւղատնտեսական ցուցահանդիսի կարգադրել մասնաժողովը յայտնում է, որ են-թադրում է ցուցահանդիսի էկսպոզիցիաներին հո-ղարանները գլխանել, պալիտիկոններ կառուցա-նելու համար թէ ծաղկոցի չըջանում, որը դրան-վում է զլխաւոր շինութեան առջև և թէ ցուցա-հանդիսի հրապարակի միւս մասերում էկսպո-զիցիաներ, որոնք դիտարկութիւն ունեն այդ տե-սակ տեղեր ձեռք բերել, պէտք է դիմեն իրանց խնդրանքով մասնաժողովին ներկայ տարվայ յունիսի 1-ից ոչ ուշ, իրանց խնդրանքներն կցե-լով պալիտիկոնների ֆասադը և ճշգրտեմամբ որո-շելով պահանջները գետնի տարածութիւնը: Իրա-քանչիւր քառակուսի սաժէն գետնի համար, որի վրա շինվելու է պալիտիկոնը, էկսպոզիցիոն պէտք է վճարի 10 ռուբլի ծաղկոցի սահմաններում: Իսկ ցուցահանդիսի հրապարակի միւս տեղերում՝ 2 ռուբլուց մինչև 5 ռուբլի, մասնաժողովի հայեցողութեան համեմատ:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԻ ՔԱՆԻ ԽՕՍՔ ՍԵՐԲԻԱՅԻ ՄԱՍԻՆ

Վերջին ժամանակներս շուտ-շուտ է սկսել կրկնվել այն լուրը, թէ Նատալիա Թագուհին վերադառնում է Բելգրադ: Դրա հետ միասին լուր կայ և այն մասին, որ Բելգրադ է վերադառ-նալու և միտրոպոլիտ Միխայիլը, որը յայտնի է իբրև Միլան Թագաւորի հակառակ կուսակցու-թեան պարագլուխներից մինը:

Այդ արդէն բաւական է, որպէս զի Սերբիա-յում քաղաքական կուսակցութիւնների մէջ նո-րից սկսվի յուզմունք և իրարանցում: Այդ յուզ-մունքը և իրարանցումը բաւական յոգնեցնող են, քանի որ, զեն նորերս միայն Սերբիան մի փոքր հանդարտվեց այն փոթորիկներից, որոնք տեղի ունեցան Միլանի և Նատալիայի բաժանվելու, Նա-տալիայի Սերբիայից հեռացվելու և վերջապէս Միլանի դահլիճ հրաժարվելու պատճառով:

Դեռ նոր է սկսել ինքնակալութիւնը ձեռք առնել երկրի գործերի ղեկավարութիւնը, և ա-հա կրկին նոր առիթներ են հանդէս գալիս, քա-ղաքական կուսակցութիւնների կատաղի մրցման համար: Այդ առիթներից են ահա Նատալիայի և միտրոպոլիտ Միխայիլի Բելգրադ վերադառնա-լը:

Թէ երբ կը վերադառնայ Նատալիա Թագուհին Բելգրադ, այդ ճիշդ յայտնի չէ, թէ և անկասկա-ծելի է արդէն, որ նա ուղում է մօտ լինել իր որդուն, և նրա վերադառնալով արդեւաւորվի պա-ճառներ առ այժմ չունի Այդ վերադարձին ար-դէն քաղաքական առանձին նշանակութիւն են տալիս Վիեննայում, և աւստրիական մամուլը քաղաքական մի դէպք է համարում Նատալիայի վերադարձը, կապելով այդ բանը Աւստրիայի ազ-դեցութեան և Սերբիայի քաղաքական ապագայի հետ: Աւստրիական լրագրողները այն կարծիքն են յայտնում, որ Նատալիայի և միտրոպոլիտ Մի-խայիլի վերադարձը նպատակ ունի մեծացնել և բարձրացնել Միլան Թագաւորին հակառակ կու-սակցութեան ոյժը, նոր կերպարանք տալով Սեր-բիայի արտաքին քաղաքականութեանը, և այդ

պատճառով հէնց, նախկին Թագուհու վերադար-ձը համարվում է քաղաքական նշանակութիւն ունեցող մի դէպք:

Թէ ինչ լրբը կը բռնի դէպի այդ դէպքը այժ-մեան ինքնակալութիւնը, և նոյն ինքն Աւստրի-ան, այդ մասին որոշ ոչինչ յայտնի չէ, յայտնի է միայն այն, — այդ էլ իբրև լուր միայն, — որ Միլան Թագաւորը յայտնել է, թէ շուտով վերա-դառնալու է Բելգրադ: Միլանի Բելգրադ գալը արդէն շատերը համարում են մի նշան, թէ Բել-գրադում կարող են նորից քաղաքական մրցու-նքը և յուզմունքներ սկսվել:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐՆԵՐ

—Վիեննայից հեռագրում են, որ ձիաքաշ եր-կաթուղու կառուցանելի գործադուրը համարեա զադարել է. նրանց պահանջներին բաւականու-թիւն պիտի տրվի: Ձիաքաշի ընկերութիւնը տու-գանքի է ենթարկվել և այդ բանը համարելով պատիժ, կառուցանելը դո՞ւ են մնացել:

—Երբ գնեցաւ Բուլանովէ հեռանում էր Բրի-սելից, — հեռագրում են ֆարիզից, — նրա կողմա-կիցները ներկայացրին նրան մի ուղեւձ, որի մէջ յարձակվում են թէ ֆրանսիական և թէ ընդգիտական կառավարութիւնների դէմ:

—Լոնդոնում գնեցաւ Բուլանովէ ընդունելով լրագրողները ներկայացրելներին, խօսեց իր ա-նելիքների մասին: Ենթադրում են, որ նա երկար կը մնայ Լոնդոնում: Բուլանովէ ամեն օր ստա-նում է հարկաւոր նամակներ իր յարգողներից, այդ նամակները մէջ կան և բազմաթիւ փոքա-ւոր ծրարներ:

—Վիեննայից հեռագրում են, որ պրինց Բա-տենբերգ իր կնոջ հետ միասին գնաց Միլան, ուր պիտի տեսնվի իշխանուհի Կլեմենտինա Կրուր-զի հետ:

—Աւստրիական արքայադատութեան նոր մի-նիստը այս օրերս պաշտօնից զրկեց՝ աւելի քան 20 զաւառապետներին. մինիստրը վճռել է մաք-րել ադմինիստրացիան այն անարժան պաշտ-ոնեաներից, որոնք ներկայումս բազմաթիւ են Աւստրիայում:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՄՆԻՍՏԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՆՑ

ՍԵՎԱՍՏՈՊՈԼ, 19, ապրիլի: «Երկրիկ» նաւը գնաց դիմաւորելու Պարսից Դահլիճ: ԲՈՒԽԱՐԵՍ, 19 ապրիլի: Բուլանովէ զահի թագաժառանգը այսօր առաւօտեան 9 1/2 ժամին այտուղ հասաւ. նրան դիմաւորեցին կայաբա-նում թագաւորը, թագուհին, բարձր աստիճանա-ւորները, և քաղաքական յայտնի դոմինները, ա-ռանց կուսակցութիւնների խորութեան:

ՊԵՏԵՐԲՈՐԳ, 21 ապրիլի, Վարչաւայի դա-տաստանական պարտի առաջ նախագահ Բու-տովիլի՝ սենատի առաջին դէպարտամենտի օրէ-ր պրոկուրոր է նշանակված, իսկ Օղէսայի նախա-գահին դատարանի պրոկուրոր Չէրնեւսկիի նը-շանակված է Վարչաւայի նախագահին դատա-րանի նախագահ: «Гражданин» լրագրը հա-ղորդում է, որ սերբիական նոր թագաւորի օժուկն կը կատարէ Միխայիլ միտրոպոլիտը: Միտրոպոլիտը մտադրութիւն ունի հինգ օր մնալ Պետերբուրգում:

ԼՕՆԴՈՆ, 21 ապրիլի: Պարսից ծոցի ափերի վրա անկարգութիւններ են սկսվում, թուրքերը Ֆառուս գետի վրա տիրապետող մի ամբողջիւն են կառուցանում. արաբական ցեղերի աւագները միմեանց հետ կռիւ են մղում. մի կուսակցու-թիւն պնդում է, որ այդ կռիւն չովանաւորում են թուրքերը: Վախենում են, որ խռովութիւն-ները կանցնեն Մասկաւ:

ՓԱՐԻՋ, 21 ապրիլի: Նէղոսի ազգական Ման-գաշիա և Բաս-Ալուլա գտնվում են Ալժուայում: Նրանք ապարդիւն կերպով աշխատում էին հրա-ւիրել խորհրդի թագաւորութեան զլխաւոր աս-տիճանաւորներին: Նէղոսի ազգական Դէրէրի և Բաս-Ալուլայի մէջ թշնամական գործողութիւններ սկսվեցան:

ՍՕՖԻԱ, 21 ապրիլի: Ոստիկանապետը մի հը-րաման արձակեց, որով բոլոր օտարազգիներին հրամայվում է 25 օրվայ ընթացքում ներկայաց-նել իրանց անցագրերը, հակառակ դէպքում նը-րանք կաքսորվեն: Նոյն հրամանագիրը Բուլգարիա վերադարձած զաղթականներին պարտաւորեց-նում է երեք օրվայ ընթացքում իրանց ծննդա-վայրերը ներկայ:

Խաղաղի-հրատարակող ԳԻՐԳՈՐ ԱՐՄՐՈՒՆԻ

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

Թեմիս սրբազան Առաջնորդի կարգադրութեամբ, ամսիս 23-ին, կիրակի օրը, ժամը 12-ին, սուրբ պատարագից յետոյ որոշված է կատարել չորս պատգամաւորների ընտրութիւն Բեթղէէմի եկեղեցու ծխականներից, Մարիամեան Յովնանեան օրիորդաց դպրոցի հոգաբարձական ընտրութեան համար: Ուստի յիշեալ եկեղեցու մեծապատիւ ծխականները հրաւիրվում են նշանակեալ ժամուն նոյն եկեղեցին, մասնակցելու ընտրութեանը. նոյն օրը կը կատարվի յիշեալ եկեղեցու և նոր երեց-փոխանի ընտրութիւնը:

Վերադառնալ քաղաքականութեան եկեղեցիների Թիֆլիսի՝ Յովնանէս քահ. Մարտիրոսեանց 1—1 (2)

Լ յ յ տ ե ս աւ
Տ Ի Գ Օ
ՂԱԼԻ ԱԴԱԹՆԵՐԱՆ
պ ա տ կ ե ռ ն Ե
ձԵՊԱՏԵՏ ՔՕԼԱՐԻ ԿՏՐԻ
(Շուշու-Ղալի բարբառով)
Գինն է 1 ռ.
ձանապարհածախսով 1 ռ. 20 կ.
Փառակազմ 2 ռ.
Դիմել «ԱՂԻԻԻԻ» վաճառանոցը:
1—6

Въ редакція газеты „МШАКЪ“ прода-ются слѣдующія брошюры: 1) „Экономич. Положеніе Турецкихъ Армянъ“, публич. лекція Д—ра Г. Арцруни, перев. съ арм. А. Аракелянца. Цѣна 25 к. 2) Die Oeko- nomische Lage der Armenier in der Türkei, ein öffentl. Vortrag von Dr. Grigor Arzruni, übersetzt von A. Amiranjanjanz. Preis 25 k. 3) Die Hungersnoth in Türkisch-Armenien, ein Vortrag von Dr. Grigor Arzruni, über- setzt von Amiranjanjanz. Preis 20 kop. Иногородные, желающие получить бро- шюры, благоволятъ присылать по 30 коп. почтовыми марками, за каждую брошюру. Адресъ. Тифлисъ, Редакція „Мшакъ“, или Tiflis, Redaction „Mschak“. (6)

ՄԱՐԻԱՄԵԱՆ-ՅՈՎՆԱՆԵԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ հոգաբարձական խորհրդարանում Ա- ձՈՒՐԴՈՎ ՊԵՏԻ ՏՐՎԻ ԱՆԱՆԵԱՆ ՔԱՐՎԱՆԱՐԱՆ ԵՐԵՐ ԵՄԵՐԻ ԺԱՄԱՆԱԿՈՎ, առաջին կայ մայիսի 15-ից: Աձուրդին մասնակցել ցանկացողները հրաւիրվում են զալ Մարիամեան- Յովնանեան ուսումնարանը, ներկայ ապրիլի 29-ին, շաբաթ, երեկոյան 7 ժամին: 1—3

COMPAGNIE DES MESSAGERIES MARITIMES
PAQUEBOTS-POSTE FRANÇAIS.
ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ
(ՄԵՍԱԺԵՐԻ ՄԱՐԻՏԻՄ)
Կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԵԼԻ և ԲԱԹՈՒՄԻ մէջ և փոխադարձ Ուրբաթ, 28 ապրիլի, ԲԱԹՈՒՄԻՑ դուրս կը գնայ շոգհնաւ ERYMANTHE (ԷՐԻ- ՄԱՆԹ), նաւապետ MERLIN (ՄԵՐԼԵՆ), մտնելով Կ. Պոլիս, Պորտ-Լաֆոս և Լակալար: Ազգեսները ԲԱԹՈՒՄԻՄ պ. Գ. ԷՍՍԵՆՏԻՆ, իսկ ԹԻՖԼԻՍԻՄ ԳԵՐԳ ԶԵՋՈՒԲԵԱՆՑ: 2—2

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET COM.
ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Ն. ՊԱԿԵ ԵՒ ԸՆԿ.
Կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԵԼԻ և ԲԱԹՈՒՄԻ մէջ և փոխադարձ Հինգշաբթի, ապրիլի 27-ին, ՄԻՆԳՐԵԼԻԱ (MINGRELIE) շոգհնաւը, նաւապետ ԺԻԲՈՒՆ (GIBOIN) դուրս կը գնայ Բաթումից դէպի Տրապիզոն, Օրդու, Սամսոն, Կ. Պոլիս և Մարսէյ: Տեղեկութիւնների մասին պէտք է դիմել ընկերութեան գործակալներին. Բաթումում Լէմուրլուի տան, Նաբրէժնայա, և Թիֆլիսում Նախկին Ար- ծուռնի գաղլերում, № 103. 2—2 (2)

Ապրիլի 22-ին, շաբաթ օր, Թիֆլիսի ժողովարանում տեղի կունենայ ՏԻԿԻՆ Հ. ՏԵՐԵԱՆԻ Կ Օ Ն Ց Է Ր Տ Ը Կօնցերտի պրօգրամը կը յայտարարվի առանձին աֆիշաներով: Ցումանները կարե- լի է ստանալ Լանկոի երաժշտական մագազինում և ժողովարանի շէնքերից: 2—2

ՄԻ ՊԱՏԱՆԻ, որ իր ուսումը ստացել է Վիեննայի Միխիթարեան միաբանութեան մէջ, և հայերէնի հետ զիտէ ֆրանսերէն և մասամբ ռուսերէն, ՊԱՏՏՈՆ Է ՈՐՈՂՈՒՄ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐՈՒՄ ԿԱՄ ՎԱՅԱՌԱԿԱՆՆԵՐԻ ՄՕՏ: Հասցէն. Թիֆլիս, Միքայէլեան փո- ղոց, № 81, խանութ Ս. Սողալեանի:—Սարգիս Արթիւնեանին: 2—3

Կիրակի, ապրիլի 23-ին, ցերեկվայ ժամը 12 1/2-ին, Թիֆլիսի ժողովարանի դահ- լիճում բժշկապետ Ա. Ե. Ե. Բաբայեան 80ԳՈՒՑ ՀԱՅՈՒՀԵԱՑ ԲԱՐԵԳՈՐԴԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ կը կարգայ մի ԴԱՍԱԽՈՍՈՒԹԻՒՆ «Թըքախի դէմ նախախնամող մի- ջոցները» մասին: Տեղերի գները՝ 1 ռ. 50 կ., 1 ռ., 50 կ., 25 կ.: Ցումանները ծախ- վում են Կենտրոնական զրաւաճառանոցում և ժողովարանում: 2—2

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ ԵՒ ՎԱՅԱՌՎՈՒՄ Է
Հ Ա Մ Լ Է Տ
Ողբերգութիւն 5 արարուածով, հեղինակութիւն Վիլլիամ Շէքսպիրի
Թարգմանութիւն Սենքերիմ Արմրանու:
Գինն է ճանապարհածախսով 1 ռուբլի: Օտարազգաւորացիք դիմում են՝ Թիֆլիս, Василий Камалян, Հրատարակիչ Բարսեղ Քամալեան 4—4